.

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա Մակարդակ

1 **Նկարում ո՞ր տառով է պատկերված արլ. ե. 45° միջօրեականը.**



1) Բ
2) Ա
3) Գ
4) Դ

2 **Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 250 000 000 է, ապա դրա անվանական մասշտաբը կլինի.**

1) 1 սմ–ում՝ 250 կմ
2) 1 սմ–ում՝ 2500 կմ
3) 1 սմ–ում՝ 25 կմ
4) 1 սմ–ում՝ 2,5 կմ

3 **Նկարում Գ կետի ազիմուտը հավասար է.**



1) 315°
2) 45°
3) 225°
4) 135°

4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հունիսի 22–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
2) Մարտի 21–ը կոչվում է գարնանային գիշերահավասարի օր:
3) Դեկտեմբերին ցերեկը Հարավային բևեռում ավելի կարճ է, քան Երևանում:
4) Արեգակի ճառագայթները հս. լ. 25°–ի տակ տարվա մեջ մեկ անգամ ընկնում են ուղղահայաց:

5 **Երկրի խորքից հրահեղուկ զանգվածի, ջրային գոլորշիների և գազերի դուրս մղումը Երկրի մակերես կոչվում է.**

1) երկրաշարժ
2) հրաբուխ
3) ցունամի
4) գեյզեր

6 **Լուսնի և Արեգակի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացումը կոչվում է.**

1) մակընթացություն
2) ալեկոծություն
3) տեղատվություն
4) ալեբախություն

7 **Բնութագրումով որոշել տեղումների տեսակը.**
Դա առաջանում է տարվա ցուրտ, անհողմ եղանակներին, պարզկա (անամպ) գիշերներին, երբ Երկրի մակերևույթի և օդի ջերմաստիճանը 0°–ից ցածր է: Տեղումների ո՞ր տեսակն է.

1) ցողը
2) ձյունը
3) եղյամը
4) կարկուտը

8 Օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի չափումներից ստացել են – 1°, – 4°, – 7°, – 13°, + 7°, + 12°, + 9°, + 3° ցուցանիշները: Ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը կկազմի.

1) 1°
2) 12°
3) 10°
4) 25°

9 Նկարում *Բ* տառով նշված է.



1) նստվածքային շերտը
2) բազալտային շերտը
3) գրանիտային շերտը
4) միջնապատյանը

10 Նկարում ո՞ր թվով է նշված ամենաբարձր մթնոլորտային ճնշումը.



1) 1
2) 2
3) 3
4) 4

11 «Ծովածոց — օվկիանոս» զույգերից ընտրել *սխալը*.

1) Գվինեական — Ատլանտյան
2) Օմանի — Հնդկական
3) Բոտնիկական — Հյուսիսային սառուցյալ
4) Կալիֆոռնիական — Խաղաղ

12 **Տունդրայի զոնան բնորոշվում է.**

1) տարեկան ցածր ջերմաստիճաններով, քիչ տեղումներով, որոնք հիմնականում թափվում են ձյան տեսքով, ցածրահասակ բուսականությամբ
2) ցամաքային կլիմայով՝ տաք ու խոնավ ամառով, ցուրտ ձմեռով, հումուսով հարուստ (մինչև 8–12%) սևահողերով
3) խիստ չոր ցամաքային կլիմայով, օրական և տարեկան ջերմաստիճանների մեծ տատանումներով, շատ աղքատ բուսականությամբ՝ չորադիմացկուն տեսակներով
4) սեզոնային կլիմայով, ամռանը թափանցող հասարակածային, իսկ ձմռանը՝ արևադարձային օդային զանգվածներով, բուսականության մեջ բարձրացողուն (2–3 մ) հացազգիների և ծառերի գերակշռությամբ

13 **Բնութագրումով որոշել գետը.**
Հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞ր գետն է.

1) Վոլգա
2) Ենիսեյ
3) Մակենզի
4) Օբ

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հասարակածը ամենակարճ զուգահեռականն է:
2) Քարտեզում և գլոբուսի վրա հասարակածին զուգահեռ տարված գծերը կոչվում են միջօրեականներ:
3) Միջօրեականի 1° աղեղի երկարությունը կազմում է 114 կմ:
4) Աշխարհագրական երկայնությունը քարտեզում կամ գլոբուսի վրա կետի հեռավորությունն է սկզբնական միջօրեականից՝ արտահայտված աստիճաններով:

15 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հասարակածից բևեռներ շարժվելիս Արեգակից ստացվող ջերմության քանակը նվազում է:
2) Երկրագնդի վրա առանձնացնում են մթնոլորտային ցածր ճնշման չորս և բարձր ճնշման երեք գոտիներ:
3) Մթնոլորտային ցածր ճնշման գոտիներում լինում են առատ տեղումներ:
4) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում օդը կատարում է վարընթաց շարժում:

16 **«Գետ — ջրվեժ» զույգերից ընտրել *սխալը.***

1) Չուրուն — Անխել
2) Զամբեզի — Վիկտորիա
3) Կոնգո — Լիվինգստոնի
4) Մարանիոն — Իգուասու

17 **«Մայրցամաք — թերակղզի » զույգերից ընտրել ճիշտը.**

1) Աֆրիկա — Առնհեմլենդ
2) Եվրասիա —Բալկանյան
3) Հյուսիսային Ամերիկա —Սկանդինավյան
4) Ավստրալիա —Յուկատան

18 **Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային գոտու Խաղաղօվկիանոսային ափերի կլիման.**

1) չոր մերձարևադարձային է
2) խոնավ մերձարևադարձային է
3) միջերկրածովային է
4) մուսսոնային է

19 **Քարտեզում Գ տառով ո՞ր գետն է նշված.**

1) Եփրատ
2) Արաքս
3) Ինդոս
4) Տիգրիս



20 **Քարտեզում Ե տառով ո՞ր պետությունն է նշված.**

1) Սիրիա
2) Լիբանան
3) Իսրայել
4) Հորդանան

21 **Ո՞րն է ճիշտ բնութագրում «ժողովրդագրական ճգնաժամը».**

1) բնակչության թվի աճը մահացության կրճատման հետևանքով
2) բնակչության թվի կայուն նվազումը նեղացված վերարտադրության պայմաններում
3) բնակչության թվի կայուն աճը ընդլայնված վերարտադրության պայմաններում
4) բնակչության թվի կայունացումը պարզ վերարտադրության պայմաններում

22 **Բնակության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.**

1) տարաբնակեցում
2) բնակչության միգրացիա
3) բնակչության տեղաբաշխում
4) բնակչության բնական շարժ

23 **Բնութագրումով որոշել պետությունը.**
«Մեծ յոթնյակ»–ի անդամ այս պետությունն ըստ պետական կարգի պառլամենտական հանրապետություն է: Հարուստ է մարմարի ու սնդիկի պաշարներով: Երկրում բարձր է ուրբանիզացման մակարդակը, սակայն ի տարբերություն այլ եվրոպական երկրների՝ այստեղ շատ չեն խոշորագույն քաղաքները: Ո՞րն է այդ երկիրը.

1) Իտալիան
2) Ֆրանսիան
3) Գերմանիան
4) Մեծ Բրիտանիան

24 **Երկրի բնակչության թիվը կազմում է 365 600 մարդ, ծնելիության գործակիցը՝ 5‰: Ծնվածների բացարձակ թիվը կկազմի.**

1) 1828 մարդ
2) 1628 մարդ
3) 1980 մարդ
4) 2028 մարդ

25 **Ընտրել «ժողովուրդ — լեզվախումբ» համապատասխանության ճիշտ շարքը.**

1. ֆրանսիացիներ	ա. իրանական
2. անգլիացիներ	բ. սլավոնական
3. ուկրաինացիներ	գ. գերմանական
4. տաջիկներ	դ. ռոմանական

1) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ
2) 1–դ, 2–գ, 3–բ, 4–ա
3) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
4) 1–դ, 2–բ, 3–գ, 4–ա

26 **Դեպի Սև ծով ելք ունեցող երկիր է.**

1) Ռումինիան
2) Հունաստանը
3) Ադրբեջանը
4) Մոլդովան

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել *սխալը.***

1) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն
2) պլաստմասսա — մեքենաշինություն
3) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն
4) պողպատ — մետաղաձուլություն

28 **Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Բորատի և քրոմիտի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է:
2) Սև մետաղաձուլության խոշոր կենտրոնը մայրաքաղաք Անկարան է:
3) Տնտեսության ավանդական զարգացած ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:
4) Երկրի խոշոր նավահանգիստներից են Ստամբուլը, Իսքենդերունը և Իզմիրը:

29 **«Կեղծ ուրբանիզացումը» առավել բնորոշ է.**

1) ԱՄՆ–ին և Ֆրանսիային
2) Բրազիլիային և Արգենտինային
3) Ճապոնիային և Շվեդիային
4) Իսրայելին և Բելգիային

30 **Ներցամաքային երկրներ են.**

1) Եգիպտոսը և ՀԱՀ–ը
2) Հնդկաստանը և Մյանման
3) Բոլիվիան և Պարագվայը
4) Արգենտինան և Բրազիլիան

31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Աշխարհի խոշորագույն ջերմաէլեկտրակայանը Ռուսաստանում է:
2) Ջերմաէներգետիկան համաշխարհային էլեկտրաէներգետիկայի առաջատար ճյուղն է:
3) Աշխարհի խոշորագույն ջրաէլեկտրակայանը կառուցված է Ենիսեյ գետի վրա:
4) Ներկայումս համաշխարհային էներգետիկան իր զարգացման ածխային փուլում է:

32 **Ջրաէներգետիկ ռեսուրսներով սակավ ապահովված երկրներն են.**

1) Ալժիրը և Չադը
2) Ռուսաստանը և Նորվեգիան
3) Կանադան և Բրազիլիան
4) Թուրքիան և Հնդկաստանը

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Սևանա լիճն արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
2) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթա:
3) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:
4) Հարավային լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է Արփայի գոգավորությունը:

34 **ՀՀ–ում քիմիական արդյունաբերության զարգացման կարևոր նախադրյալ չէր.**

1) պղնձաձուլության պրոցեսում անջատված գազերը
2) քիմիական արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկը
3) բնական գազի ներմուծումը
4) սև մետաղների ներմուծումը

35 **Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) գինու–կոնյակի արտադրությունը
2) պղնձաձուլությունը
3) քիմիական արդյունաբերությունը
4) պանրի արտադրությունը

36 **Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Գ տառով.**

1) Քաշաթաղ
2) Վարդենիս
3) Արմաղան
4) Աժդահակ



37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված *Հ* տառով.**

1) Վարդենիս
2) Եղեգնաձոր
3) Վայք
4) Ջերմուկ

38 **Ածխի պաշարներով հարուստ երկրներ են.**

1) Բրազիլիան և Կանադան
2) Ավստրալիան և ՀԱՀ–ը
3) Ֆրանսիան և Իտալիան
4) Իրանը և Իրաքը

39 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
2) քիմիական պարարտանյութերը
3) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը
4) ջրէկներում էներգետիկ նպատակներով օգտագործված ջրերը

40 **Բնական միջավայրի այն տարրերը, որոնք օգտագործվում են և կարող են օգտագործվել հասարակական արտադրության գործընթացում մարդու նյութական և հոգևոր պահանջմունքները բավարարելու համար, կոչվում են.**

1) աշխատանքային ռեսուրսներ
2) բնական ռեսուրսներ
3) տնտեսական ռեսուրսներ
4) ֆինանսական ռեսուրսներ

41 **Գրել այն կղզիների և կղզեխմբերի համարները, որոնք Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում են.**

1) Կանադական արկտիկական
2) Նոր Զելանդիա
3) Շպիցբերգեն
4) Նյուֆաունդլենդ
5) Նոր Երկիր
6) Սախալին
7) Հյուսիսային երկիր
8) Կուրիլյան

42 **Գրել այն լեզուների համարները, որոնք մտնում են ալթայան լեզվաընտանիքի մեջ.**

1) պարսկերեն
2) արաբերեն
3) քրդերեն
4) ադրբեջաներեն
5) ուզբեկերեն
6) վրացերեն
7) իտալերեն
8) հինդի

43 **Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.**

1) Օլթի
2) Կարկառ
3) Մասրիկ
4) Հազարու
5) Քասաղ
6) Տավուշ
7) Դեբեդ
8) Գետիկ

44 **Տրված պետությունները դասավորել ատոմային էլեկտրաէներգիայի արտադրության նվազման կարգով.**

1) ԱՄՆ
2) Ուկրաինա
3) Ճապոնիա
4) Ռուսաստան

45 **Աֆրիկայի ջրագրական ցանցի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Աֆրիկյան գետերը հիմնականում ունեն ձնասառցադաշտային սնում:
2) Աֆրիկայի ջրագրական ցանցը ընդհանուր առմամբ բաշխված է հավասարաչափ:
3) Աֆրիկայի տարածքի մոտ 1/3-ը հոսք չունի դեպի օվկիանոս:
4) Կոնգո գետի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման նպատակներով:
5) Նյասան և Տանգանիկան տեկտոնական ծագման լճեր են:
6) Նիգերը և Օրանժը հորդանում են ձմռանը:

Բ Մակարդակ

46 **Երկու կետեր միևնույն միջօրեականի վրա են՝ միմյանցից 5° հեռավորության վրա: Նրանց միջև իրական հեռավորությունը կլինի.**

1) 505 կմ
2) 555 կմ
3) 550 կմ
4) 557 կմ

47 **Արագածի գագաթին օդի ջերմաստիճանը –12°է, իսկ նույն պահին ստորոտում՝ + 6°: Ստորոտի բացարձակ բարձրությունը կլինի (հաշվարկը կատարել 6°–ով).**

1) 990 մ
2) 1090 մ
3) 2090 մ
4) 3090 մ

48 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Օվկիանոսային տաք հոսանքները նպաստում են կլիմայի ցրտեցմանն ու մթնոլորտային տեղումների նվազմանը:
2) Օվկիանոսային սառը հոսանքներից տեղի է ունենում ջրի ակտիվ գոլորշացում:
3) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորություններն անվանում են մայրցամաքային լանջ:
4) Օվկիանոսի այն մասերում, որտեղ գոլորշացումը մեծ է, և գետեր չեն թափվում, ջրի աղիությունը միջինից բարձր է:

49 **Ի՞նչը բնորոշ չէ արևադարձային օդային զանգվածներին.**

1) ձևավորվում են 20°–40°աշխարհագրական լայնություններում
2) բնորոշվում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածության պատճառով)
3) ծովային տարատեսակը բնութագրվում է բարձր ջերմությամբ և խոնավությամբ, իսկ ցամաքայինը՝ բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ
4) առանձնանում են փոքր խոնավությամբ և մեծ թափանցիկությամբ

50 **Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Հյուսիսային Ամերիկայում.**

1) Կենտրոնական հարթավայր, Վինսոն լեռ, Օնեգա լիճ
2) Լա Պլատայի դաշտավայր, Կոտոպախի հրաբուխ, Էրի լիճ
3) Մեծ ավազան սարահարթ, Առափնյա լեռնաշղթա, Մեծ արջի լիճ
4) Թուրանի դաշտավայր, Ռուիս հրաբուխ, Մարակայբո լիճ

51 **Ըստ պետական կառավարման ձևի՝ բացարձակ միապետություններ են.**

1) Քուվեյթը և Օմանը
2) Ճապոնիան և Դանիան
3) Բելգիան և Նորվեգիան
4) Նիդերլանդները և Մեծ Բրիտանիան

52 **Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներ են.**

1) Ֆրանսիան և Գերմանիան
2) Ռուսաստանը և Ուկրաինան
3) Նիգերիան և Եթովպիան
4) Կանադան և Ավստրալիան

53 **Ցորեն արտահանող առաջատար երկրներ են.**

1) ԱՄՆ–ը և Ավստրալիան
2) Իսպանիան և Ճապոնիան
3) Իտալիան և Վիետնամը
4) Ինդոնեզիան և Գերմանիան

54 **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

1) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրա-կայաններում:
2) Սահմանակից պետություններից են Լյուքսեմբուրգը և Շվեյցարիան:
3) Արևմտյան Եվրոպայում ամենախտաբնակ պետությունն է:
4) Ֆրանսիային է պատկանում Կորսիկա կղզին:

55 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս երկիրն իր տարածքով և բնակչության թվով դասվում է աշխարհի գերխոշոր երկրների շարքին: Արևելքում ափերը ողողվում են Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Այն հարուստ է գրեթե բոլոր տեսակի օգտակար հանածոներով: Սակայն անբավարար են վառելիքաէներգետիկ ռեսուրսները:
Ո՞րն է այդ երկիրը.

1) ԱՄՆ–ը
2) Մեքսիկան
3) Բրազիլիան
4) Արգենտինան

56 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հարավ–արևելքում սահմանակցում է Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակին:
2) Զբաղեցնում է մոտ 29 հազ. կմ² մակերես:
3) Ալպ–Հիմալայան գեոսինկլինալային գոտում է:
4) Հարավում տարածվում է Կուր–Արաքսյան դաշտավայրը:

57 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հանրապետության տարածքը բարեխառն կլիմայական գոտում է:
2) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:
3) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:
4) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

58 **Տավուշի մարզում տնտեսության ո՞ր ենթաճյուղն է բացակայում.**

1) գինու և պահածոների արտադրություն
2) գունավոր մետաղաձուլություն և քիմիական արդյունաբերություն
3) հանքային ջրերի արտադրություն և զբոսաշրջություն
4) գորգագործություն և փայտամշակություն

59 **Ի՞նչն ընդհանուր չէ Արարատի և Արմավիրի մարզերի համար.**

1) Գերիշխում են կուլտուր ոռոգելի հողերը:
2) Արդյունաբերության մեջ առաջատար է ատոմային էներգետիկան:
3) Բնորոշ են խոշոր գյուղերը:
4) Գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանն արհեստական ոռոգումն է:

60 **Ո՞ր շարքում տրված մարզերի համար է գունավոր մետալուրգիան մասնագիտացման ճյուղ.**

1) Գեղարքունիքի և Շիրակի
2) Լոռու և Սյունիքի
3) Արագածոտնի և Շիրակի
4) Արմավիրի և Վայոց ձորի

61 **Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի խորության աճման կարգով.**

1) Ուրմիա
2) Սևանա
3) Վանա

62 **Գրել Որոտան գետի վրա կառուցված ջրէկների համարները.**

1) Արգելի
2) Արզնիի
3) Սպանդարյանի
4) Ողջիի
5) Զորագետի
6) Շամբի
7) Հրազդանի
8) Տաթևի

63 **Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Գերմանիային.**

1) Իտալիա
2) Շվեյցարիա
3) Հունգարիա
4) Ուկրաինա
5) Լեհաստան
6) Սլովակիա
7) Նիդերլանդներ
8) Էստոնիա

64 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բրնձի արտադրությամբ.**

1) Բրազիլիա
2) ԱՄՆ
3) Ինդոնեզիա
4) Չինաստան
5) Իրան
6) Պերու
7) Լաոս
8) Չիլի

65 **Օդի բացարձակ խոնավությունը 12 գ/մ ^{3} է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 15 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:**

(66-67) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, իսկ գագաթին՝ 440 մմ.

66 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67 Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

(68-69) Գետի լայնությունը 12 մ է, միջին խորությունը՝ 0,5 մ: Գետի մեջ գցված խցանը 1 վայրկյանում անցնում է 2 մ տարածություն:

68 *Որոշել գետի ծախսը:*

69 *Որոշել գետի հոսքը մեկ ժամում:*

70 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
2) ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում Հայկական ատոմի բաժինը կազմում է ավելի քան 2/5–ը:
3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
4) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
5) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
6) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):